

Յա. Ի. Մուլիբյանց, Շ. Գ. Ասլանյան, Ռ. Ա. Կարապետյան

ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ-ԼԱՏԻՆԱ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Բույսերի հայերեն անունների բառարան ունենալու պահանջը վաղուց արդեն հասունացել է հատկապես այն կապակցությամբ, որ մեր հանրապետությունում լայն ուսումնասիրություններ են կատարվում օգտակար բույսերի (դեղատու, կերային, վիտամինակիր, պտղատու և սննդատու), ինչպես նաև կանաչապատման նպատակով օգտագործվող զանազան բուսատեսակների յուրացման ուղղությամբ: Բույսերի հայերեն անունները խիստ անհրաժեշտ են նաև «Հայաստանի ֆլորա» բազմահատոր մենագրությունը կազմելու համար, որտեղ յուրաքանչյուր բուսատեսակի լատիներեն և ռուսերեն անվան հետ միասին բերվում է նաև հայերեն անունը: Վերջապես, բույսերի հայերեն անունները անհրաժեշտ են ընթերցողների ավելի լայն խավի՝ բժիշկների, գրողների, ուսուցիչների, գյուղատնտեսների, ուսանողների և այլ բնագավառների մասնագետների, ինչպես նաև հրատարակչությունների համար:

Ելնելով դրանից, ներկա հոդվածի հեղինակները ձեռնամուխ եղան բույսերի հայերեն անունների փոքրիշատե լիակատար (բուսաբանական) բառարան կազմելու գործին:

Ինչպես աշխատանքի ընթացքում պարզվեց, բույսերի հայերեն անունները ցրված են թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան բազմաթիվ գրական աղբյուրներում, որոնց մի մասը մինչև այժմ դեռ հրատարակված չէ: Տպագրված աշխատությունների որոշ մասը, որպես գրադարանային հազվագյուտ օրինակներ, պահվում են հատուկ գրադարաններում, ուստի և մատչելի չեն լայն օգտագործման համար:

Մեզ հայտնի են հայերեն լեզվով հրատարակված բուսաբանական հատուկ բառարանների միայն հազվադեպ օրինակներ:

Հայերեն-լատիներեն բուսաբանական առաջին բացատրական բառարանը, «Հայ բուսակ» անունով, կազմել է ականավոր հայ պատմաբան Ղ. Ալիշանը (Վենետիկ, 1895 թ.), այնուհետև, Ա. Բեդեյանը կազմել և երկու հրատարակությամբ լույս է ընծայել բույսերի անունների բազմալեզու (այդ թվում և հայերեն) բառարան (Եգիպտոս, 1936—1957 թթ.): Նորագույն բառարաններից կարելի է նշել Ք. Մատուրյանի «Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարանը» (Երևան, 1962 թ.):

Մեզ են հասել նաև 17—19-րդ դարերի բուսաբանական բառարանների մի շարք ձեռագրեր: Դրանցից մեկը, օրինակ, 600 բույսերի լատիներեն և հա-

* Տպագրելով այս հոդվածը, խմբագրությունը հույս ունի, որ բառարանագետները, լեզվաբանները, բուսաբանները և տվյալ հարցի հետ առնչություն ունեցող մյուս մասնագետները իրենց կարծիքը կհայտնեն հոդվածում արժարժող հարցերի վերաբերյալ և առաջարկություններ կանեն բառարանը կազմելու առավել նպատակահարմար մեթոդների մասին:

ներեն անուններ պարունակող բառարանը կազմել է ականավոր հայ գրող Ռաֆայել Պատկանյանը (ձեռագիր)։ Կարելի է հիշատակել նաև Տիգրան Զիթունու «Հայ բուսան» ձեռագիր բուսաբանական բառարանը (Վան, 1901—1915 թթ.) և մի շարք այլ աշխատություններ, որոնք պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում և Երևանի գրականության և արվեստի թանգարանի գրական արխիվում։

Բաժի հատուկ բուսաբանական բառարաններից, հրատարակվել կամ ձեռագիր վիճակում պահպանվել են մի քանի ֆլորիստիկական-բուսաբուժական, գյուղատնտեսական, բժշկական աշխատություններ, ուր կան բույսերի շատ անուններ, որոնք հայերենին զուգընթաց բերվում են նաև ֆրանսերեն, անգլերեն, ավելի սակավ՝ լատիներեն լեզուներով։ Թվենք դրանցից մի քանիսը։

Ամիրզովլաթ Ամասիացի «Օգուտ բժշկության» (1496 թ.) հրատարակվել է 1949 թ. Երևանում, Ս. Շահրիմանյան «Տնկաբանություն կամ փղորայ Հայաստանի» (ձեռագիր, Թիֆլիս, 1819 թ.), որը ընդգրկում է 1100 բույսերի տեսակներ և Գմելինի «Սիբիրի ֆլորան» աշխատությունից հետո, Ռուսաստանում երկրորդն է։ Այնուհետև, Մ. Ռեստենի (Միքայել Պատկանյան) «Բառարան անուանց զանազան ախտից, դեղերից, բուսոց, հանքաց»-ը (Փարիզ, 1832 թ.), Հ. Աթանասյանցի «Երևանի նահանգի բուսականությունը» (Երևան, 1881 թ.)։

Ժամանակակից հրատարակություններից նշենք Գ. Աղաջանյանի «Հայաստանի մոլախոտերը» աշխատությունը (Երևան, 1957 թ.), Թ. Ծատուրյանի «Բույսերի անունների լատիներեն-հայերեն-ռուսերեն բառարան»-ը (Երևան, 1962 թ.) և այլն։

Բույսերի բազմաթիվ հայերեն անուններ են բերվում նաև ընդհանուր լեզվաբանական և հանրագիտական բառարաններում, որոնցից կարևորագույններն են՝ Ի. Հ. Յարութիւն վ. Ալեքերեանի «Անգղիարէն եւ հայերէն բառարան»-ը (Վենետիկ, 1868 թ.), Գ. Լուսինյանի «Ֆրանս-հայերեն բառարան»-ը (Փարիզ, 1901 թ.), որն ընդգրկում է մեծ թվով բույսերի անուններ, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը (Երևան, 1926—1932 թթ.), Ստ. Մալխասյանցի բառահատոր «Հայերէն բացատրական բառարան»-ը (Երևան, 1944—1945 թթ.)։ Մի խումբ հեղինակների կողմից կազմված քառահատոր «Ռուս-հայերեն բառարան»-ը (Երևան, 1956—1958 թթ.) Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ և, վերջապես, Հ. Զաքմագճյանի «Անգլո-հայերեն բառարան»-ը (Պեյրուիթ, 1922 թ.) և այլն։ Բույսերի հայերեն անունների բառարան ստեղծելու գործում անսպառ աղբյուր են հանդիսանում նաև բույսերի ամենուրեք տարածված ժողովրդական անունները, որոնք հավաքվում են գիտարշավների ժամանակ։

Բայց մի շարք դեպքերում հարկ է լինում կազմել բույսերի հայերեն նոր անուններ, հիմք ընդունելով այդ բույսերի արդեն գոյություն ունեցող լատիներեն անունները։

Մեր բառարանի համար օգտագործված գրականության անգամ համառոտակի թվարկումից (ընդամենը մշակված է շուրջ 200 անուն գրականություն) արդեն երևում է, թե որքան տարբեր են այդ աղբյուրները թե՛ իրենց նպատակադրությամբ, թե՛ լեզվական և թե՛, մասնավորապես, աշխարհագրական տերիտորիայի տեսակետից։ Նշված հանդամանքները մեծ չափով անդրադարձել են այդ աշխատությունների բովանդակության վրա՝ դժվարացնելով նրանց օգտագոր-

ծումը ներկայումս: նկատենք նաև, որ բուռարանների մեծ մասը հաճախ, կազմել են ոչ թե բուսաբաններ, այլ պատմաբաններ, բժիշկներ, ղեկավարներ, գրողներ և գյուղատնտեսներ, որոնք, բնականաբար, այնքան էլ լավ ծանոթ չեն եղել բույսերի կարգաբանությանը և անվանումներին:

Նշված զրականության տվյալները չեն բնագրվում Հայաստանի (էլ չենք ասում՝ Կովկասի) բուսականության նույնիսկ կեսը, քանի որ այդ աշխատությունները հիմնականում կազմվել և հրատարակվել են Հայաստանից դուրս, այլ երկրներում, իրենց բովանդակության վրա կրելով տվյալ երկրի ֆլորայի ազդեցությունը:

Հաճախ բառարաններում բերված են այնպիսի բույսերի անուններ, այդ թվում մերձարևադարձային և արևադարձային, որոնք տնտեսական տեսակետից արժեքավոր են, անկախ այն բանից, թե այդ բույսերը աճում են Հայաստանում, թե ոչ:

Այդպիսի բույսերի մեծ մասը զանազան երկրներում, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններում միանգամայն տարբեր ձևով կոչվելով, մտել է զրականության մեջ տարբեր անունների տակ: Այդ է պատճառը, որ որոշ բույսեր հաճախ ունենում են թվով մի քանի տասնյակ համանուն և հոմանիշ անուններ: Նշենք նաև, որ բառարաններում բերված բույսերի անունները հաճախ բնորոշում են ոչ թե տվյալ բույսը, այլ համապատասխանում են այն նյութին, որը ստացվում է տվյալ բույսից: Մի հանգամանք, որը հաճախ ստեղծում է խառնաշփոթություն: Օրինակ, գոյություն ունի օխրայի գույնի բուսական մի ներկանյութ՝ ալիզարին: Հայերենում այդ ներկանյութի որոշ շափով ձևափոխված անունը, այն է՝ «ալաժահրի», որպես բույսի ցեղային անուն, բերվում է 16 հեղինակների կողմից՝ *Asperula* (Գ. Մենվիշյան, 1897 թ., Ստ. Մալխասյանց, 1945 թ.), *Rhamnus* (Ս. Ամատունի, 1912 թ., Ն. Աճառյան, 1926 թ.), *Galium* (Ստ. Մալխասյանց, 1945 թ.), *Ligustrum* (Ս. Շահրիմանյան, 1818 թ.), *Viburnum* (Մեդվեդև, 1919 թ.), *Reseda* (Ե. Տեմիրճիպաշյան, 1896 թ., Ստ. Մալխասյանց, 1945 թ., Ս. Երևմյան, 1900 թ.), *Daphne* (ժողովրդական անուն, Գիրովական) և ուրիշներ:

Վերոհիշյալ հեղինակների աշխատություններում «ալաժահրի»-ն վերագրվում է յոթ տարբեր ցեղերի: Ընդհանուրը տվյալ բույսերի համար այն է, որ նրանց տարբեր մասերում պարունակվում է օխրայի գույնի կամ նրա նման ներկանյութ, չնայած, որ այդ բոլոր բույսերն էլ ունեն իրենց ինքնատիպ, զրականության մեջ ընդունված հայկական անունները՝ *Asperula*—գետնաստղ, *Rhamnus*—դժնիկ, *Galium*—մակարդախոտ, *Ligustrum*—սրնգենի, *Daphne*—տերևատ, *Viburnum*—գերիմաստի, *Reseda*—հափուկ, նազ:

Նույնպիսի օրինակներ կարող են համարվել «կաթնուկ» և «կանճրակ» անունները, որոնց տակ բերվում են կաթնահյութ արտադրող կամ յուղ պարունակող մի քանի տասնյակ բույսերի տեսակների անուններ:

Նման սխալն առաջանում է նաև այն դեպքում, երբ բույսերի անունները համահնչուն են, չնայած, որ նրանք պատկանում են բուսական տարբեր տեսակների, ցեղերի և նույնիսկ ընտանիքների: Օրինակ՝ *Danaa* (*Apiaceae* ընտանիք) անունը շփոթված է *Danae* անվան հետ (*Liliaceae* ընտանիք) կամ *Ficaria* (*Ranunculaceae* ընտանիք) շփոթում են *Falcaria*-ի հետ (*Apiaceae* ընտանիք):

Բույսերը հաճախ ունենում են մի քանի հայերեն անուններ: Դրա պատ-

ճառն այն է, որ տարբեր հեղինակներ լատիներենից կամ ռուսերենից սխալ են թարգմանել այդ անունները: Այսպես, օրինակ, *Russula* սունկը մի քանի աղբյուրներում կոչվում է խոնավակեր, մյուսներում՝ հում ուտելի սունկ, կամ հումասունկ, որը բերում է Թ. Գ. Մատուրյանը:

Բույսերի անունների մեծ խառնաշփոթությունը հետևանք է նաև այն բանի, որ շատ հեղինակներ օգտագործել են բույսերի հին՝ մինչլինեյյան կամ առհասարակ ոչ ճիշտ լատիներեն անուններ, որոնք հայկական տառադարձության մեջ պահպանվել են մինչև մեր ժամանակները, թեև գիտական, լատիներեն նոմենկլատուրայում վերացված են:

Խառնաշփոթություն առաջանում է նաև բույսերի հայերեն անուններ կազմելու ժամանակ: Այսպես, օրինակ, եթե հեղինակներից ոմանք հայերեն անուններ ստեղծում են, ելնելով լատիներենից՝ այն ուղղակի թարգմանելով հայերեն, կամ գրում են լատիներեն անունը հայերեն տառերով, ապա ոմանք էլ հիմք են ընդունում բույսի ռուսերեն անվանումը, որը հաճախ միևնույն բույսի համար լինում է մի քանիսը: Այստեղից էլ ծագում է նոր դժվարություն, թե բույսի հայերեն անունն ընտրելիս ռուսական անուններից որը համարել հիմնականը:

Բույսերի հայերեն անուններն ընտրելիս մենք, որպես հիմք, ընդունել ենք նրանց լատիներեն անունն այն դեպքում, երբ հնարավոր է եղել այն թարգմանել ըստ հայերեն իմաստի, հակառակ դեպքում բերել ենք լատիներեն անունները՝ հայերեն տառադարձությամբ:

Նշենք նաև, որ այն աշխատությունները, որոնք բույսերի հայերեն անուններ են պարունակում, հրատարակվել են տարբեր երկրներում, տարբեր ժամանակներում և տարբեր լեզուներով, հաճախ մեկը մյուսից անկախ: Այդ իսկ պատճառով չի ստուգվել, թե գրականության մեջ մտցվող տվյալ անունն արդյոք կրկնություն չէ՞, կամ տվյալ բույսը նախկինում չի՞ ունեցել իր անունը: Նկատենք նաև, որ հայերեն մեծ թվով բարբառների առկայության պատճառով մինչև այժմ էլ բույսի ինքնատիպ անվան կոդքին դեռ շարունակվում է նրա «նոր» անունների ստեղծումը, որը բարդացնում է առանց այն էլ գոյություն ունեցող խառնաշփոթությունը:

Բույսերի հայերեն անունների բառարան կազմելուն զգալի շափով նպաստել է Հայաստանի ֆլորայի ուսումնասիրությունը, մասնավորապես նրա տեսակային կազմի ճշտումը «Հայաստանի ֆլորա»-ն մենագրության մշակման ընթացքում: Վերջինս օգնում է գիտականորեն ճշտելու Հայաստանում աճող բույսերի ցուցակը, հետևապես և նրանց գիտական անունը կապելու հայերեն անունների հետ, բազմաթիվ անուններից ընտրելու հիմնականը, առանձնացնելու համանուն և հոմանիշ անունները: «Հայաստանի ֆլորա»-ն հարստացնում է նաև բույսերի անունների բառարանային ֆոնդը ի հաշիվ նորաստեղծ անունների, ինչպես և ժողովրդական անունների, որոնք հավաքվում են գիտարշավների ընթացքում:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեր կողմից գրական աղբյուրների մշակումը և ժողովրդական անունների հավաքումը հնարավորություն տվեցին կազմելու բույսերի հայերեն և լատիներեն անունների քարտարկը բաղկացած ավելի քան 80.000 քարտերից, որի հիման վրա և կազմվում է լիբրո նշված բառարանը:

Բառարանում ի մի են բերված Հայաստանում և նրա սահմաններից դուրս աճող ոչ միայն վայրի, այլև կուլտուրական բույսերի անունները, որոնք հանդիպել են բույսերի ցեղերի, տեսակների, բնատանիքների անվանումները մշակված դրականության մեջ, այդ թվում նաև ժողովրդական անունները (հավաքված՝ Կամոյի, Մարտունու, Կարմիրի, Աբովյանի, Նամշադինի, Աշտարակի, Արթիկի, Կիրովականի շրջաններում և Լեռնային Ղարաբաղի մարզում), ինչպես նաև ստեղծված են մեծ թվով նոր անուններ:

Հայերենում բույսերը, սովորաբար, կոչվում են սյարզ անուններով, որոնք կազմված են մեկ բառից: Բուսաբանության զարգացմանը զուգընթաց ցեղերի մեջ մտնող տեսակների թիվը ավելանում է ի հաշիվ նոր հայտնաբերվող տեսակների, որոնք մեծ մասամբ չունեն իրենց անունները և շարունակվում են կոչվել պարզ անունով: Օրինակ, գազ ցեղին (*Astragalus*) պատկանող Հայաստանում աճող շուրջ 120 տեսակներն էլ կոչվում են գազ, կամ զանգակ են կոչվում նույնանուն (*Campanula*) ցեղի բոլոր 50 տեսակները, որոնք աճում են մեզ մոտ:

Եթե նկատի ունենանք, թե որքան անհավասար արժեք են (թեկուզ տնտեսական տեսակետից) միևնույն ցեղի տարբեր տեսակները, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի շփոթություն կարող է առաջանալ, երբ դրանք բոլորը կոչվեն միևնույն անունով: Նորագույն բուսաբանական գրականության մեջ այս թերությունն արդեն վերացված է, և բույսերը կոչվում են կրկնակի անունով: Մակայն, դժբախտաբար, դեռ ոչ բոլոր բույսերն ունեն տեսակային անուններ: Մենք աշխատել ենք Հայաստանի և մասամբ էլ Կովկասի բույսերի համար բերել կրկնակի (ցեղային և տեսակային) անուններ, նկատի ունենալով, որ այդ հանդամանքը որոշ չափով կբացահայտի նրանց գիտական և տնտեսական հատկությունը:

Բառարան կազմելիս որոշ դժվարություն էր առաջացնում բառերի դասավորման կարգը: Լատիներեն նումենկլատուրայի մեջ առաջին տեղում սովորաբար դրվում է բույսի ցեղային անունը, երկրորդ տեղում՝ տեսակային անունը: Հայերենում հաճախ տեսակային անունը դրվում է առաջ, օրինակ՝ վարդագույն տափուղո (*Lathyrus roseum*): Այս դեպքում միևնույն ցեղի տեսակները կգրտնրվեն բառարանի տարբեր մասերում, իսկ բոլոր այն բույսերը, որոնք կոչվում են վարդագույն, բայց պատկանում են տարբեր ցեղերի և բնատանիքների, կգրտնրվեն նույն տեղում:

Ցանկացած անունն ավելի հեշտ գտնելու նպատակով, մենք բառարանում առաջին տեղում դնում ենք ցեղի անունը, տվյալ դեպքում՝ տափուղո վարդագույն:

Բառարանում բերվում են ոչ միայն Հայաստանում աճող բույսերի անունները, այլև այն բույսերին, որոնք աճում են Հայաստանից դուրս, և նրանց հայերեն անունները հանդիպել են հեղինակների կողմից մշակված գրականության մեջ: Այս հանգամանքը հիմնավորում ենք նրանով, որ նպատակահարմար չէր լինի բառարանի ծավալը սահմանափակել միայն Հայաստանի վայրի, այնտեղ մշակվող և ինտրոդուկցիայի ենթարկված բույսերով, մանավանդ, որ ձևերի տակ եղած հարուստ քարտային սիստեմը հնարավորություն է տալիս կազմելու քիչ թե շատ լիակատար բուսաբանական բառարան:

Բառարանում բերված են բույսերի շուրջ 10 հազար անուններ, այդ թվում 600-ից ավելի նոր ժողովրդական անուններ, որոնցով, իհարկե, չեն սպառվում

ժողովրդի կենցաղում օգտագործվող բոլոր անունները: Այս հանգամանքը, անշուշտ, հաշվի կառնվի հետագա ուսումնասիրողների կողմից և կլրացվի բառարանի ֆոնդը: Բառարանում բերվում են նաև ավելի քան 1500 տեսակային նոր անուններ. որոնք կազմված են ըստ լատիներեն անվան կամ էլ տվյալ բույսի առանձնահատկությունների հիման վրա:

Բառարանի կառուցվածքը պատկերացվում է հետևյալ կերպ:

Բույսերի հիմնական անունների՝ ցեղերի և տեսակների հայերեն այբբենական բառարան: Այստեղ բույսի հայերեն անվան տակ փակագծում բերվում է ընտանիքի անունը, այնուհետև նրա լատիներեն և ռուսերեն անվանումը: Ներքևում, քիչ խորքից, հայերեն անվան տակ թվարկվում են տվյալ տեսակի հայերեն համանուն և հոմանիշ անունները: Ստորև բերում ենք մի երկու օրինակ մեր ասածը պարզաբանելու համար:

Արջընկույզ փոքր,

(Solanac.)

գժախոտ, դուրման, ժանտընկույզ, ճլրթրիկ, փշախնձորենի:

Փիփերթ անտառային,

(Malvac.)

բաղրջուկ վայրի, հաց ու փաթաթ, տուղտ, օշօշ:

Datura stramonium L.,

Дурман обыкновенный.

Malva silvestris L.,

Просвирняк плебейский.

Բոլոր հայերեն անուններին կից (մեծ մասամբ գրականության մեջ հազվագեղ հանդիպող և վիճելի անունների) զբաղվում է թվանշան, որը ցույց է տալիս այն աղբյուրը, որտեղից այդ անունը վերցված է: Այդ բանը հնարավորություն է տալիս ճիշտ կերպով գնահատելու այս կամ այն անունը և հարկ եղած դեպքում ուղղելու հեղինակների սխալը: Վերջինս անխուսափելի է, քանի որ գրականության մեջ բերված շատ անուններ չեն ուղեկցվում համապատասխան հերքարիումային նմուշներով, որոնք թույլ կտային վերջնական որոշում կայացնելու տվյալ անվան մասին: Նոր առաջարկվող անունները նշվում են աստղանիշերով:

Ըստ հեղինակների, սա համարվում է բառարանի հիմնական մասը:

Բառարանը կազմվելու է երեք լեզուներով՝ հայերեն, լատիներեն և ռուսերեն:

Բառարանի վերջում բերվում են ինդեքսներ.

1. Լատիներեն-հայերեն

2. Ռուսերեն-հայերեն

3. Հայերեն հոմանիշ անունների ցուցակ:

Ինդեքսները բերվում են այբբենական կարգով:

Բառարանում բույսերի լատիներեն, ռուսերեն և հայերեն բոլոր անունները հնարավորին չափ համապատասխանեցված են ժամանակակից բուսաբանական տերմինաքանակին:

Վերջում անհրաժեշտ ենք համարում կանգ առնել բառարանի կառուցվածքին վերաբերող մի շարք հարցերի վրա, որոնք կարիք ունեն պարզաբանման:

Բառարանից հեշտությամբ օգտվելու համար մենք ընդունել ենք բույսերի անունները գրելու հետևյալ կարգը: Սկզբում գրվում է բույսի (ցեղային) հայերեն այն անունը, որը տարածված է կենցաղում, ապա նրա ածական անունը:

Ոմանք առարկում են այս սկզբունքի դեմ, պատճառաբանելով, թե այս հանգամանքը զգալիորեն կսլակուսեցնի բառարանից օգտվողների թիվը՝ հատկապես մեր հանրապետության սահմաններից դուրս: Ըստ որում, վերջիններս

առաջարկում են բույսերի անունները դասավորել ըստ լատիներեն այբուբենի, ինչպես որ ընդունված է գիտական բուսաբանական գրականության մեջ:

Բառարանը կազմելու ընթացքում հիմնական դժվարություններից մեկը եղել է բույսի հայերեն և լատիներեն անունների համաձայնեցումը և դրանք ժամանակակից անվանացանկի հետ համապատասխանեցնելը: Բույսերի հայերեն անուններն, ինչպես նշեցինք, ցրված են զանազան հրատարակություններում, որոնցից մի քանիսը մոտ 100 տարվա պատմություն ունեն: Վերջիններս մեջ բերված հայերեն անունները հաճախ չեն կապվում նրանց ժամանակակից լատիներեն անվան հետ, կամ գրված են այնպիսի տառադարձումով, որ դժվար է պարզել, թե խոսքը ի՞նչ բույսի մասին է: Հեղինակներն աշխատել են հնարավորին շատ նվազեցնել այն խառնաշփոթությունը, որ պոլյություն ունի բույսերի գիտական լատիներեն և հայերեն անունների համապատասխանության մեջ: Թե որչափով է դա հաջողվել նրանց, այդ կարող են ասել ընթերցողները:

Վիճելի անունները թողնված են լատիներեն այն անվան կողքին, որին դա վերագրել է այս կամ այն հեղինակն իր աշխատության մեջ:

Բույսերի հայերեն բազմաթիվ անուններից բրեձ մեկին առաջնություն տալը շատ դժվար է: Հեղինակները հիմնականում ընդունել են կամ ավելի լայն տարածում ունեցողը և ինքնատիպը, կամ էլ ավելի վաղ (ըստ ժամանակի) բերված անունը: Մնացած անունները, որպես հոմանիշներ, բերվում են բույսի հիմնական անվան կողքին: Հնարավոր է, որ հետագայում, որպես հիմնական անուն, կառաջարկվի ժողովրդական ինքնատիպ անուններից մեկը:

Չան բույսերի հայերեն անուններ, որոնք թեև ըստ բովանդակության ինքնատիպ են, բայց հեղինակներին չի հաջողվել դրանք կապել նրանց լատիներեն անվանումների հետ: Չնայած այդ հանգամանքին, այդպիսի անունները կբերվեն բառարանում, հույս ունենալով, որ հետագայում կհաջողվի պարզաբանել դրանք:

Հեղինակները հավակնություն չունեն կարծելու, թե իրենց աշխատությունը գերծ կլինի թերություններից, ուստի խնդրում են ընթերցողներին՝ այս հոգվածում շոշափված հարցերի շուրջը իրենց գիտողություններն ուղարկել հետևյալ հասցեով՝ Երևան, Լիվան, բուսաբանական ինստիտուտ, հերբարիում:

Я. И. Мулкиджанян, Р. А. Карапетян, Ш. Г. Асланян

О ПРИНЦИПАХ СОСТАВЛЕНИЯ БОТАНИЧЕСКОГО СЛОВАРЯ АРМЯНСКИХ, ЛАТИНСКИХ И РУССКИХ НАЗВАНИЙ РАСТЕНИЙ

Р е з ю м е

В связи с ведущимся в республике широким изучением и освоением растительных ресурсов возникла необходимость расширить имеющуюся специальную литературу и приступить наряду с издающимся в настоящее время многотомным трудом «Флора Армении» к составлению Ботанического словаря.

Армянские названия растений имеются в литературе многих, ныне

ставших библиографической редкостью изданий, которые в основном публиковались за рубежом. Приведенные в них названия, как правило, утилитарных растений слабо отражают флору Кавказа и, в частности, Армении.

Словари эти составлялись преимущественно не ботаниками, а людьми различных специальностей — врачами, фармацевтами, историками, что отразилось на их содержании. Приводимые названия нередко обозначают не само растение, а продукт, получаемый из него. Многие редкие растения, составляющие значительную часть флоры, не включены в словари, так как не имеют соответствующих армянских названий.

Растения интродуцированные цитируются в армянской справочной литературе на основании произвольного перевода их русского или латинского названия или приведения латинского названия армянскими буквами, что в свою очередь усугубляет существующую путаницу.

Составлением нового словаря авторы преследуют цель свести воедино все армянские названия и их синонимы, связав их с латинскими и русскими названиями, способствовать уменьшению существующей в этой области путаницы, в возможной мере облегчить труд, связанный с быстрым нахождением нужного названия растения.